

Որքանով է ընդունելի արհեստական բանականության միջոցով ստեղծված նկարը Իսլամի կողմից

Մղեկյան Վահրամ Վ.

*ԵՊՀ, Արևելագիտության ֆակուլտետ, Արաբագիտության ամբիոն,
4-րդ կուրսի բակալավրիատի ուսանող (Երևան, ՀՀ)*

<https://orcid.org/0009-0009-8272-5067>

vahram.mghdesyan@edu.ysu.am

UDC: 28:004.8; EDN: ETGJVO

DOI: 10.58587/18292437-2024.1-74

Հանգուցաբառեր՝ Իսլամ, արհեստական բանականություն, մարդկային պատկեր, հարամ, հալալ, մուսուլման, մուֆտի

В какой степени картинка, созданная искусственным интеллектом, приемлема для ислама?

Мгдесян Ваграм В.

*ЕГУ, Факультет востоковедения, кафедра арабистики
студент 4 курса бакалавриата (Ереван, РА)*

Аннотация. Данная работа посвящена современной теме, которая, безусловно, имеет очень тесную связь с изучением арабистики, особенно с позиций ислама. В профессиональных кругах хорошо известно, что ислам отвергает создание человеческого образа любым способом посредством живописи. Это утверждение имеет свое логическое объяснение со стороны ислама, то есть противоречит идее единобожия, ведь объектом поклонения может стать образ человека. В настоящее время быстрый рост информационных технологий стимулирует появление ряда инноваций, в том числе «искусственного интеллекта», бросившего сегодня вызов миру. Конечно, ислам также является неотъемлемой частью этого мира, который с его твёрдой религиозной системой не может переплетаться с инновационными изменениями, предлагаемыми искусственным интеллектом.

Цель данной работы — понять, в какой степени изображение искусственного интеллекта приемлемо исламом, т.е. считается ли оно «халяльным» или «харамом». Путем изучения мнений некоторых улемов в данной работе предпринята попытка осветить современные подходы к этому вопросу с точки зрения ислама и, наконец, понять, является ли то, что создано постмодернистским интеллектом, человеческим или техническим творением.

Ключевые слова: Ислам, искусственный интеллект, человеческий образ, харам, халяль, мусульманин, муфтий

How acceptable is a picture created by artificial intelligence by Islam?

Mghdesyan Vahram V.

*YSU, Faculty of Oriental Studies, Department of Arabic Studies,
4th year undergraduate student (Yerevan, RA)*

Abstract. This work deals with a contemporary topic, which of course, has a very close connection with the study of Arabic studies, particularly from the perspective of Islam. It is well known in professional circles that Islam rejects the creation of a human image in any way through painting. This claim has its own logical explanation from the side of Islam, that is, it contradicts the idea of monotheism, because the human image can become an object of worship. Nowadays, the rapid growth of information technology is stimulating the emergence of a number of innovations, among them "artificial intelligence", which has challenged the world today. Of course, Islam is also an integral part of that world, which, with its rigid religious system, cannot intertwine with the innovative changes proposed by artificial intelligence. The purpose of this work is to understand to what extent an artificial intelligence image is acceptable by Islam, i.e. whether it is considered "halal" or "haram". By studying the opinions of some ulema, an attempt has been made in this work to highlight the current approaches to this issue from the perspective of Islam, and finally to understand whether what is created by postmodern intelligence is a human or a technical creation.

Keywords: Islam, artificial intelligence, human image, haram, halal, Muslim, mufti

Կան բազում աշխատություններ, որոնք փորձում են պարզաբանել Իսլամի՝ որպես համաշխարհային կրոններից մեկի, դիրքորոշումն արհեստական բանականության վերա-

բերյալ: Այդ աշխատություններում, որոնցից են օրինակ՝ «An Artificial Intelligence approach to Arabic and Islamic content on the internet»-ը [11], «A Preliminary Survey of Muslim Experts' Views

on Artificial Intelligence»-ը [14], և «Islamic Ethical Foundations of AI and Its Modern Applications»-ը [2], քննարկվում են մի շարք հարցեր՝ կապված Իսլամի կողմից արհեստական բանականության ընդունելի լինելու կամ չլինելու հետ: Որոշ արևմտյան հեղինակների աշխատություններում արծարծվում է այն միտքը, որ արհեստական բանականությունն ինքնին անընդունելի չէ Իսլամի կողմից քանի դեռ այն օգտագործվում է ի բարօրություն հավատացյալի: Իհարկե, կան նաև որոշ ուլեմներ, որոնք համացանցային հարթակներում քննարկումների ժամանակ հնչեցված նմանօրինակ հարցերին պատասխանում են սուբյեկտիվորեն՝ ոմանք նշում են, որ դա ընդունելի է Իսլամի կողմից, մյուսները կտրուկ դեմ են արտահայտվում այդ մոտեցմանը: Ինչևէ, կարծիքները բազմատեսակ են և բազմաբովանդակ, ուստի կարծում են, որ այս աշխատանքն իր տեսակով ուրույն տեղ է զբաղեցնում ոլորտում, քանզի վերջինիս նպատակն է պարզել, թե իվերջո որքանով է արհեստական բանականության կողմից ստեղծված մարդկային պատկերն ընդունելի Իսլամի կողմից:

«Արհեստական բանականություն» տերմինը սկզբնապես մարդկանց մոտ առաջացնում է ռոբոտների և հսկա մեքենաների պատկերներ, որոնք ինչ-որ պահի դուրս գալով մարդկային կառավարման գոտուց ավերածություններ են գործում և գրավում աշխարհը, ինչպես պատկերված է բազում գիտաֆանտաստիկ գրքերում և ֆիլմերում: Իրականում արհեստական բանականությունը (AI) պարզապես մարդկային բանականության կրկնօրինակումն է մեքենաների միջոցով: Դա համակարգչային գիտության մի ճյուղ է, որը զբաղվում է մեքենաների և հավելվածների ստեղծմամբ: Խելացի թվային օգնականները, ինչպիսիք են «Siri»-ն և «Alexa»-ն [9], մինչև նոր ինքնակառավարվող մեքենաներ, ավելի ու ավելի հսկայական տեղ են զբաղեցնում 21-րդ դարում: Հետաքրքրական է այն փաստը, որ արհեստական բանականության արդյունաբերությունը զգալիորեն կաճի առաջիկա տարիներին և մինչև 2030 թվականը 13 տրիլիոն ԱՄՆ դոլարի ներդրում կունենա համաշխարհային տնտեսության մեջ [7]:

Նախ կցանկանամ խոսել արհեստական բանականության մասին, որն այսօր դարձել է մարդկանց առօրյա կյանքի անբաժանելի մասը և իքնին ներկայացնում է նոր դարաշրջան, որտեղ տեխնոլոգիական հեղափոխությունը փոխում է մարդկային կյանքի ընթացքը: Արդարության համար պետք է նշել, որ այն թույլ է տալիս մարդկանց հաղթահարել մի շարք դժվարություններ տարբեր ոլորտներում, ինչն էլ իր հերթին հղի է թե՛ դրական, և թե՛ բացասական հետևանքներով: Խոսելով արհեստական բանա-

կանության մասին՝ պետք է նշել 1956 թվականին Դարթոնդի համալսարանում (Նյու Հեմփշիր) կայացած սեմինարը, որն ըստ մի շարք ուսումնասիրողների համարվում է «արհեստական բանականություն» հասկացության օգտագործման անկյունաքարային դրվագներից մեկը, և վերջինիս անվանումը առաջ է քաշվել Ջոն Մակկարտիի կողմից: Արհեստական բանականության առաջացումը և զարգացումը միտված է համակարգչային և տեխնոլոգիական զարգացմանը, որի նպատակն է գործել այնպես ինչպես մարդու բանականությունը: Խոսելով իր բացասական հետևանքների մասին՝ կցանկանամ նշել, որ այն ինքնին ենթադրում է նորարարությունների մի ամբողջ կծիկ, ինչն էլ բազում բարդություններ է առաջացնում մի շարք կուռ և պահպանողական կառուցվածք ու գաղափարական հենք ունեցող համակարգերի համար: Այդպիսի կուռ համակարգ կարող է համարվել աշխարհի խոշորագույն կրոններից մեկը՝ Իսլամը, որն անկախ այժմեական նորարարություններից փորձում է պահպանել այն արժեհամակարգը, որը վերջինիս համար ծառայում է որպես հիմք: Յուրաքանչյուր նորարարական մոտեցում, որը միտված է Իսլամի կրոնական համակարգը զարգացնելուն և այսօրվա իրականությանը համահունչ դարձնելուն, կարող է խնդրահարույց լինել վերջինիս համար: Այդպիսի խնդիրները և նորարարական լուծումները, որոնք առաջին հայացքից հակասում են համակարգի էությանը, կարող են տարբեր ուլեմների կողմից մեկնաբանվել տարբեր ձևերով, ինչի արդյունքում նորարարությունը շատ դեպքերում կարող է չարժանանալ կտրուկ վերաբերմունքի: Այդպիսի մի խնդիր առաջ է քաշում արհեստական բանականությունը՝ առաջին հայացքից հակասության մեջ մտնելով Իսլամի գաղափարախոսական հիմքի հետ:

Որքանով է ընդունելի արհեստական բանականության միջոցով ստեղծված նկարը Իսլամի կողմից:

Մինչ անդրադառնալը բուն թեմային և այն մարտահրավերներին, որոնք իր հետ բերում է արհեստական բանականությունը, նախևառաջ հարկ են համարում նշել, որ Իսլամը կրոն է, որն ընդունում է տեխնոլոգիական առաջընթացի բոլոր ձևերը՝ ներառյալ արհեստական բանականության զարգացումը, սակայն արհեստական բանականության կիրառումը պետք է համահունչ լինի իսլամական բարոյական սկզբունքների և արժեքների հետ: Իհարկե, ընձեռելով մի շարք հնարավորություններ, որոնցից է օրինակ՝ Դուրանի թարգմանումը տարբեր լեզուներով, կամ վերջինիս յուրահատուկ մեկնաբանումը, միջին վիճակագրական մուսուլմանի տեսանկյունից կարող է ընկալվել, որպես դրական գործոն, սակայն, ինչպես բազմիցս նշեցի, այն

նաև առիթ է հանդիսանում մի շարք տարածայնությունների: Այդ տարածայնությունների շարքին է դասվում մարդկային պատկերի ստեղծումը արհեստական բանականության կողմից: Ինչպես նշել էի աշխատանքի սկզբում, Իսլամում մարդկային դեմքի պատկերումը թույլատրելի չէ, առանձին մարմնի մասեր կարող են պատկերվել, սակայն դիմապատկեր կամ դեմքին բնորոշ պատկերներ՝ ոչ: Արհեստական բանականության զարգացումը ստույգ այս հարցի շուրջ բազում հարցեր առաջացրեց: Մի շարք մուսուլմանների սկսեց հետաքրքրել այն, թե արդյո՞ք արհեստական բանականության կողմից ստեղծված պատկերը, այսինքն՝ մարդկային դիմանկարը ևս համարվում է անընդունելի: Այս հարցի տրամաբանությունը կայանում է նրանում, որ մարդկային դիմանկարի պատկերումը մուսուլմանի կողմից համաձայն Իսլամի անընդունելի է, իսկ արհեստական բանականությունը չի ընկալվում որպես մարդ, ավելին չունի կրոնական համոզմունքներ անկախ այն բանի, որ այն հրահանգը ստանում է մարդու կողմից:

Այս հարցը բնականաբար ունի բազմատեսակ և բազմաբովանդակ բացատրություն և տարբեր ուլեմների կողմից մեկնաբանվում է յուրովի: Իհարկե այն փաստը, որ այս խնդիրը չափից շատ լուսաբանված չէ, ակնհայտ է, քանզի կատարելով բազմաշերտ ուսումնասիրություն այս խնդրի վերաբերյալ, չգտնվեց բավական չափով աղբյուրներ, որպեսզի հնարավոր լիներ տալ հստակ պատասխան: Բայց և այնպես կցանկանամ ընթերցողի ուշադրությանը հրավիրել այն կարծիքներին, որոնք առկա են այս հարցի շուրջ:

Իսնդրո առարկային անդրադարձած մարդկանցից մեկն է մուֆտի Մուհամմադ Թոսիբ Միահը Մեծ Բրիտանիայից, ով նշում է, որ այս հարցը բազմաշերտ է և տարբեր մուֆտիների կողմից ունի բազում մեկնաբանության և բացատրման եղանակներ: Հարցի վերաբերյալ կարծիքներն ու տեսակետները Մուհամմադ Թոսիբ Միահը բաժանում է խմբերի: Առաջին խումբ տեսակետներ ունեցողների համար մարդկային դիմանկարի պատկերումն արհեստական բանականության կամ տեսախցիկի կողմից չի կարող դասվել ոչ ընդունելի արարքների շարքին, քանզի այդ պատկերը բաղկացած է միլիոնավոր մանր մասնիկներից, որոնք մի ընդհանուր ինֆորմացիոն ազդանշանի դեպքում միահյուսվում են և դառնում պատկեր, բայց երբ նրանք առանձին են, ապա տեսանելի չեն մարդկային աչքի համար և չեն արտահայտում որևէ իմաստ, հետևաբար այս տեսանկյունից դիմապատկերը չի դիտարկվում որպես անընդունելի: Երկրորդ խմբի համար այս և այլ տեսակի պատկերները դասվում են ընդհանուր

անընդունելի համարվող պատկերների դասին և կտրականապես մերժվում են: Եվ կա մի խումբ, որոնք իրենց անորոշությամբ զբաղեցնում են այս երկուսի միջև կենտրոնական դիրք: Ըստ Մուհամմադ Թոսիբ Միահի՝ այն նկարը, որը այնքան փոքր է իր չափսերով, որ դիտողի կանգնած դիրքից դիմագծերը հստակ չեն ուրվագծվում, ապա դա ընդունելի է [12]: Կարելի է ասել, որ վերջինիս կողմից սույն հարցի հստակ պարզաբանում, թե՛ արհեստական բանականության կողմից ստեղծվածն ընդունելի է թե ոչ չկա, այլ կան ընդամենը տարբեր մոտեցումներ, որոնք ընդունելի են մի խմբի համար, իսկ մյուս խմբի համար՝ ոչ:

Իրաքցի մուֆտի Սայյեդ Մուհամմադ Ալ Մուսավիի կարծիքով մարդկանց պատկերումը համակարգչի միջոցով ընդունելի է, իսկ ինչ վերաբերում է նկարչությանը, ապա այստեղ վերջինս կրկին հստակ սահմանում չի տալիս, այլ ասում է, որ մարդկային պատկերի կամ այլ կենդանի էակի ամբողջական չափսերի պատկերումն ընդունելի չէ մի շարք ուլեմների կողմից, սակայն կոնկրետ մարմնի մասի վերարտադրումը՝ ընդունելի [4]: Մուֆտի Բիլալի կարծիքով արհեստական բանականության կողմից գեներացված նկարը անընդունելի չէ, սակայն նա հավելում է որ կան ուլեմներ, որոնք նմանատիպ գեներացումը նույնացնում են մարդու կողմից նկարելու հետ դրանող իսկ այն դարձնելով անընդունելի [13]:

Կա նաև մոտեցում, որ անկախ այն բանի որ նկարը ստեղծվում է արհեստական բանականության կողմից, միևնույն է այդ գործողության կարգադրությունը տալիս է մարդը՝ անուղղակի մասնակցություն ունենալով այդ նկարի ստեղծման գործընթացում: Վերջին մոտեցումն առաջ է քաշվել մուֆտի Ֆեյսալ բին Աբդուլ Համիդ Ալ Մահմուդի կողմից [3]: Մեկ այլ կարծիքի համաձայն, որը վերահաստատում է վերը նշված մոտեցումը, այն է՝ անկախ այն բանի որ դիմապատկերը ստեղծված է արհեստական բանականության կողմից միևնույն է այդ կարգադրության ետևում կանգնած է մարդը, և այս կարծիքի հեղինակ Շեյխ Ասիմ Ալ Հաքիմը նույնացնում է դա ուրիշի ձեռքով կամ միջոցով մի բան անելու հետ, որն անընդունելի է [1]:

Կատարված աշխատանքի արդյունքում հարկ են համարում նշել, որ այս հարցի շուրջ կարծիքները բազմատեսակ են և բազմաբովանդակ: Ըստ իս արհեստական բանականության կողմից ստեղծված նկարը համարել ընդունելի կամ անընդունելի Իսլամի կողմից միանշանակ պատասխան չի կարող լինել: Այս հարցի շուրջ կան տեսակետներ և այդ տեսակետների հեղինակներն այս հարցը վերագրում են տեխնիկական զարգացմանը և կտրուկ չեն արտահայտվում վերջինիս վերաբերյալ, իսկ

շատերն այս գործընթացը միևնույն է վերագրում են նկարչությանը (մարդկային պատկերի) որն արգելված է Իսլամում և կտրականապես դեմ են այդ մոտեցմանը: Կարծում են, որ այս հարցի ընդունելի կամ անընդունելի լինելը կախված է տվյալ կրոնազետի մեկնաբանման եղանակից, բայց և այնպես այն կմնա խնդրահարույց հարց հասարակ մուսուլմանների և կրոնազետների շրջանում, քանզի այն չունի և չի կարող ունենալ մեկ միասնական և հստակ պատասխան:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Al-Hakeem, Sh. Assim.** *Youtube*. October 10, 2021. <https://www.youtube.com/watch?v=TNDfJvGQay0> (accessed 04.01.2024).
2. **Alkhir, Talal Agil Attas.** «Islamic Ethical Foundations of AI and Its Modern Applications.» *IJCSNS International Journal of Computer Science and Network Security, VOL.22 No.5, 2022: 741-746.*
3. **al-Mahmudi, Faisal bin Abdul Hamid.** *FATWA.CA*. February 22, 2023. <https://goo.su/UdHtA> (ссылка укорочена, accessed 03.01.2024).
4. **Al-Musawi, Sayyed Mohammad.** *Al-Islam*. November 2023 г. <https://goo.su/ki52M5> (ссылка укорочена, дата обращения: 04.01.2024).
5. *Al-Islam*. November 2023. <https://shorturl.at/LPSY3> (accessed 04.01.2024).
6. *Quora*. October 2022 г. <https://www.quora.com/Is-generating-AI-pictures-of-people-haram> (дата обращения: 03.01.2024).
7. **Awais, Ammar.** *Islam Explained*. November 5, 2022. <https://islamexplained.info/2022/11/05/islam-on-artificial-intelligence/> (accessed 02.01.2024).
8. **Awais, Ammar.** *Islam on Artificial Intelligence*. November 5, 2022.
9. **Gaëlle.** *EVVR*. February 5, 2023. <https://evvr.io/blogs/newsroom-2/siri-vs-alexa-top-differences-you-need-to-know> (accessed 01.01.2024).
10. **Gaëlle.** *Siri or Alexa? Which one do I go for? Discover the top differences between Siri vs Alexa, and learn which virtual assistant is best for you.* 5 February 2023.
11. I-AIBS Institute for Artificial intelligence and Biological Systems. "An Artificial Intelligence approach to Arabic and Islamic content on the internet." *Leeds LS2 9JT*, n.d.: 1-13.
12. **Miah, Mohammed Tosir.** *IslamQA*. б.д. <https://islamqa.org/?p=19581> (дата обращения: 02.01.2024).
13. **Mufti Billal.** *forum.islamicfinanceguru*. 23 March 2023 г. <https://goo.su/nW7nD> (ссылка укорочена, дата обращения: 03.01.2024).
14. Tinjauan Awal Pandangan Pakar Muslim tentang Kecerdasan Buatan. «A Preliminary Survey of Muslim Experts' Views on Artificial Intelligence.» *ISLAMIIYYAT*, January 2021 г.: 1-14.

Տճանաչանք/հանձնվել է՝ 10.02.2024

Рецензирована/Չրիսխուսվել է՝ 16.02.2024

Принята/Ընդունվել է՝ 22.02.2024